ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

30 ՀՈՒՆԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Հովհաննես Ալեքսանյանը, Գրետա Այվազյանը, Աննման Ավետիսյանը, Անի Հարությունյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Գեվորգ Մուրադյանը, Եղիշե Պետրոսյանը, Մարութ Պետրոսյանը, Արեվիկ Պողոսյանը, Լիլիթ Սարոյանը, Մարինե Սաֆարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար ժ/պ՝ Հովհաննես Հարությունյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 06 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 62–րդ հոդվածով.

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 30-ի թիվ 06 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 55-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌԻՄԱ ՀՈՎՍԵՓԻ ՄԿՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /04-091-0414-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՄԽԻԹԱՐ ՄԱՐԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով և հիմք ընդունելով Ռիմա Հովսեփի Մկոյանի կողմից լիազոր ներկայացուցիչ Նազար Փողրատչյանի դիմումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Ռիմա Մկոյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17062025-04-0070 վկայական, տրված 17 հունիսի 2025թ. /04-091-0414-0012 կադաստրային ծածկագիր/ 2.0 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից 2.0 հա փոփոխել «ջրային հողերի» նպատակային նշանակության հողերի, ոռոգման նպատակով 25000մ^3 ծավալի ջրամբար կառուցելու համար:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 56-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՄԵՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԻՏԱԼ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՍՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԽԻԹԱՐ ՄԱՐԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 7-ի N 20-Ա որոշումը, Տիտալ Սուրենի Հասոյանի դիմումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Տիտալ Հասոյանին սեփականության իրավունքով պատկանող 04-022-0005-0050 կադաստրային ծածկագրով 0,30158 հա-ից (վկայական՝ թիվ 18112024-04-0069 տրված 18 նոյեմբեր 2024 թվական) նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, որը ներառված է «Արմավիր-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում՝ 0,30158 հա նպատակային նշանակությունը փոփոխել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի:

2. Տիտալ Հասոյանին համայնքի բյուջե պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքների փոփոխման պահին առկա տարբերությունը, որը կազմում է համապատասխանաբար 656850 (վեց հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, վճարման ժամկետ սահմանել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 57-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 32-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՀԵՐ ՀԱՐԹԵՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի «Բաղրամյան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 32-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 58-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ «ՍԱՎԱՏ» ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով 29.05.2025 թվականին «ՍԱՎԱՏ» ֆրանսիական բռնցքամարտի հայկական ֆեդերացիայի նախագահ Գևորգ Թորոսյանի գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1.Տալ համաձայնություն, որպեսզի «ՍԱՎԱՏ» ֆրանսիական բռնցքամարտի հայկական ֆեդերացիայի միջոցով 2025 թվականի հուլիսի 2-6-ը Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում անցկացվելիք Սավատի աշխարհի Combat առաջնությանը մասնակցեն Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրից մարզիկ Գևորգ Հովհաննիսյանը, Լեռնագոգ բնակավայրից մարզիչ Գևորգ Թորոսյանը և Քարակերտ բնակավայրից՝ պատվիրակության ղեկավար Շանթ Պետրոսյանը: Մրցաշարին մասնակցության ծախսերը՝ 1310 (հազար երեք հարյուր տասը) եվրոյի չափով (ըստ տվյալ օրվա եվրոյի փոխարժեքի), ֆինանսավորել Բաղրամյան համայնքի բյուջեից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 59-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԽԻԹԱՐ ՄԱՐԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջարկությունը:

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Քարակերտ գյուղի վարչական տարածքում գտնվող D=133մմ, L=25մ, D=76մմ, L=359մ ընդհանուր 384,0 մ երկարությամբ և Բաղրամյան գյուղի վարչական տարածքում գտնվող D=133մմ, 108մմ, 76մմ, 57մմ, 1388,0 գծամետր գազատարը անորոշ ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ շահագործման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 60-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2026-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼԱՎԵՐԴԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածով.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի 2025-2026-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ /ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով/ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեի ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլվում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 61-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌԻՄԱ ՀՈՎՍԵՓԻ ՄԿՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ /04-091-0414-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԽԻԹԱՐ ՄԱՐԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով և հիմք ընդունելով Ռիմա Հովսեփի Մկոյանի կողմից լիազոր ներկայացուցիչ Նազար Փոդրատչյանի դիմումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Ռիմա Մկոյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17062025-04-0072 վկայական, տրված 17 հունիսի 2025թ. /04-091-0414-0011 կադաստրային ծածկագիր/ 1.0 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից 1,0 հա փոփոխել «ջրային հողերի» նպատակային նշանակության հողերի, ոռոգման նպատակով 15000մ^3 ծավալի ջրամբար կառուցելու համար:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 62-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՍԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԴԱՎԹՅԱՆ

ԼԵՌՆԻԿ ԿԱՐՈՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՀԵՐ ՀԱՐԹԵՆՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՍԱՀԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հովհաննես Հարությունյանը

_____